ԳԼՈՒԽ Ա
ՕՀԱՆԱՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻ ԿՈՆԴԱԿԸ

Ժամանակների ի հայտ բերելը և նրանց պատմությունը գրվեց առաջին պատմագիրների կողմից, որոնք գրեցին ժամանակների ու դարերի մասին, ինչպես որ իմացան ըստ իրենց գիտության՝ երեք ժամանակների մասին՝ այսինքն անցյալը կարդալով, ներկան գրելով, ապագայի մասին հիշատակելով հայտարարեցին: Ոմանք երկարաբանությամբ, ոմանք համառոտելով, ոմանք անցյալի վերաբերյալ գրեցին, ոմանք ժամանակագիրներ էին, ինչպես որ ցույց է տալիս իրենց պատմությունը ըստ իրենց ոճի: Ոմանք գրեցին փիլիսոփայական ճարտասանությամբ, ոմանք աստվածաշնչական գիտությամբ, ոմանք լի իմաստությամբ, ոմանք էլ ընդհանուր կերպով: Եվ ինչ-որ ձևով մեզ ճանաչեցրին անցյալը, որ մենք ներկայումս ուսանելով եկող սերունդներին իմացնենք: Ինչպես ես՝ եկեղեցու ծնունդներից վերջինս, Քրիստոսի քանքարաթաքույց ծառա Զաքարիաս՝ լինելով հարուստ ավան Քանաքեռից, եկա բնակվեցի Օհանավանքի աստվածաբնակ ու հրաշափառ Սուրբ մենաստանը՝ Հովհաննես Կարապետ մեծ ամլորդու* դռների մոտ, երիցս Երանելի առաքինի ռաբունապետ Զաքարիայի և նրա հաջորդ Հովհաննես վարդապետի մոտ 47 տարի, ստացա սարկավագապետության աստիճան: Ամեն օր մտատանջվում էի, թե ինչո՞ւ վանքս հաստատուն կոնդակ չունի, որպեսզի որմերի բոլոր արձանագրությունները գրվեն նրա մեջ. այդ մասին միշտ մտածում էի: Նաև մտածում էի անել, սակայն ձեռնհաս չէի երկու պատճառով՝ նախ որ տերերի էի ենթակա և երկրորդ՝ աշխարհիկ գործերով էի զբաղված:

Սակայն վերոգրյալ իմ տերերի վախճանից հետո հարկադրվեցի այժմյան առաջնորդից՝ խոհեմ ու պատմասեր Սարգիս վարդապետի կողմից, ինձ օգնական արի սուրբ հոգին ու ամենամաքուր կույս Մարիամը, միջնորդ անելով ողջախոհ տատրակ ու անմեղ աղավնի Սուրբ Կարապետը և սկսեցի անել իմ ծերության ժամանակ, իմ կյանքի վաքսուն տարում 1136 (1687) թվին: Եթե նույն Սուրբ հոգին ինձ կարողություն տա ձեր աղոթքներով կհայտնեմ, որպես և իմանում ենք, թե պատմագիրներից, թե հիշատակարաններից, թե արձանագրություններից, թե իմաստուն մարդկանց տեղեկությունից և գիտուն ծերերից, կնշանակեմ բոլորը ստուգությամբ, որպեսզի մեզնից հետո եկողները կարդալով սովորեն: Ինչպես Մովսեսն է ասում՝ հարցրու քո հայրերին, և ծերերից քեզ կպատմվի, կսովորես ամենը, ինչպես կամենում ես:

Այդ պատճառով, ով դու մտերիմ հարազատ, երբ կարդում ես, մի արհամարհիր, քանզի իմ կարողությունը այսքան է, ամեն ինչով ողջ եղիր:

ԳԼՈՒԽ Բ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԵՐԲ ՇԻՆՎԵՑԻՆ ԵՎ ՈՎՔԵՐ ԷԻՆ ՇԻՆՈՂՆԵՐԸ

Թեև շատերը հայոց ազգի մեջ շատ տեղերում բազմաթիվ եկեղեցիներ շինեցին, բայց մենք կնշենք, թե երբ կամ ում ձեռքերով հայոց աշխարհի եկեղեցիները շատացան: Ինչ որ գրքերից իմացա, կհայտնեմ: Արդ՝ Քրիստոսի համբառնալուց հետո աշխարհը բաժանվեց առաքյալների, Հայաստանը բաժին ընկավ Թադեոսին: Սա եկավ հայոց ու ասորիների արքա Աբգարի[175] մոտ և նրան բժշկեց վերքերից, ինչպես համեղ ոճով պատմում է Խորենացին:

Թագավորի և բոլոր զորքերի քրիստոնեությունը ընդունելուց հետո նախ այնտեղ Թադեոսի ձեռքով եկեղեցի շինվեց, ուստի առաջին հավատացյալը մեր հայոց ազգն է: Եվ առաջին կառուցված եկեղեցին այն է, որը շինեց Թադեոսը*, իսկ հետո այլ տեղերում բազմացան եկեղեցիները: Երկրորդ՝ մեծազոր Քրիստոսապսակ արքա Տրդատի հավատալուց հետո Սուրբ Լուսավորչի և քաջ Տրդատի ձեռքով շինվեցին բազմաթիվ եկեղեցիներ՝ նախ Վաղարշա-

* Ամլորդի է կոչվում Հովհաննես Մկրտիչը, որ ծնվեց պառավ Եղիսաբեթից և ծերունի Զաքարիայից:

* Էջմիածնի մայր եկեղեցին: